

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՄԱ-ԱՇՁԲ-2019/1Ն-2**

ք. Երևան

« 19 » հուլիսի 2019թ.

«Նախարարության գլխավոր քարտուղար Մ.Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արցախի ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ.Սողոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հ-25, Մ6-Հաղպատի հուշարձան կմ0+000-կմ5+000 հատվածի հիմնանորոգման, ՀՀ Տավուշի մարզի Մ16 - Բերքաբեր ճանապարհի 4,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ156+700 - կմ160+200 հատվածի հիմնանորոգման, Մ-14, /Մ-4/ - Շորժա - Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ60+300 - կմ72+800 հատվածի հիմնանորոգման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ46+400-կմ59+000 հատվածի հիմնանորոգման և Մուտեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

- 1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,
- 2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,
- 3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,
- 4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
- 5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը՝

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և

¹ Սույն պայմանագրի նախագծի 2.4.4 կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 38 900 000 (երեսութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն²:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով³:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին⁴:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

² Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

³ Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

⁴ Եթե գնման առարկան չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները, ապա սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը⁵:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

⁵ Պեղական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:⁶


8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան

ՀՎՀՀ 02578338


ՀՏ 000011005718



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ
ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Հեքիմյան 8^ա, քն.23
Արցախբանկ ՓԲԸ, Երևանի կենտրոնական
մ/6

Հ/Հ 22307001575



⁶ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ձ դրամ»

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/«Ձ դրամ»	ընդհանուր գինը/«Ձ դրամ»	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	71241200	<p>«Ձ-25, Մ6-Հաղպատի հուշարձան կմ0+000-կմ5+000 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ»</p>	դրամ	1650000	1650000	1		<p>նախագծան ախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտը՝ 30 (երեսուն) օրից, հաշված պայմանագրով նախատեսված աշխատանքների մեկնարկի օրվանից</p>
2	71241200	<p>«Ձ Տավուշի մարզի Մ16 - Բերքաբեր ճանապարհի 4,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ»</p>	դրամ	1700000	1700000	1		<p>նախագծան ախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտը՝ 30 (երեսուն) օրից, հաշված պայմանագրով նախատեսված աշխատանքների մեկնարկի օրվանից</p>
3	71241200	<p>Մ-1, Երևան – Գյումրի – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ156+700 – կմ160+200</p>	դրամ	3450000	3450000	1		<p>նախագծան ախահաշվային փաստաթղթերի</p>

		հարվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ						երի կազմման աշխատանքն երի ավարտը՝ 30 (երեսուն) օրից, հաշված պայմանագրով նախատեսված աշխատանքն երի մեկնարկի օրվանից
4	71241200	Մ-14, /Մ-4/ - Շորժա - Վարդենիս միջպեղական նշանակության ավտոճանապարհի կմ60+300 - կմ72+800 հարվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ	դրամ	12900000	12900000	1		նախագծան ախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքն երի ավարտը՝ 30 (երեսուն) օրից, հաշված պայմանագրով նախատեսված աշխատանքն երի մեկնարկի օրվանից
5	71241200	Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 միջպեղական նշանակության ավտոճանապարհի կմ46+400-կմ59+000 հարվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ	դրամ	15000000	15000000	1		նախագծան ախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքն երի ավարտը՝ 30 (երեսուն) օրից, հաշված պայմանագրով նախատեսված աշխատանքն երի մեկնարկի օրվանից
6	71241200	Մուրեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ	դրամ	4200000	4200000	1		նախագծան ախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքն երի

								ավարդը՝ 30 (երեսուն) օրից, հաշված պայմանագր ով նախատեսվ ած աշխատանքն երի մեկնարկի օրվանից
--	--	--	--	--	--	--	--	----------------------------------------------------------------------------------------------------------------------------

ՉԱՓԱՐԱԺԻՆ 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ-25, Մ6-Հաղպատի հուշարձան կմ0+000-կմ5+000 հատվածի հիմնանորոգման նախագծի պատրաստման

Ծրագրի անվանումը	Ճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2019 թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Աշխատանքների անվանումը	Հ-25, Մ6 - Հաղպատի հուշարձան կմ0+000-կմ5+000 հատվածի հիմնանորոգման նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ
Ճանապարհի անվանումը	Հ-25, Մ6 - Հաղպատի հուշարձան
Հարված	կմ0+000-կմ5+000
Երկարություն	5.0 կմ
Աշխատանքի տեսակը	Հիմնանորոգում
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Ճանապարհի կարգը	Թողնել անփոփոխ
Ճանապարհային պարվածք	Թեթևացված
Ծածկի տեսակը	Ա/բետոն
Ընդհանուր դրույթներ	<ul style="list-style-type: none"> Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգական թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:
Հիմնական պարտականություններ և պահանջներ	<p>Հիմնական պարտականություններ՝</p> <ul style="list-style-type: none"> Ինժեներական հետազննման աշխատանքների իրականացում, Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում, Չինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնել հիմնանորոգվող տեղամասը՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով: <p>Հետազննման վերաբերյալ պահանջներ՝</p> <ul style="list-style-type: none"> Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ 1-2.01-99 նորմերի և ԳՕՍՏ 32836-2014-ի պահանջների համապատասխան՝ նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով, հետազննման ընթացքում հիմնանորոգվող ճանապարհի երկայնքով, առնվազն յուրաքանչյուր 500 մետր տեղամասում կատարել հորատումներ՝ ճանապարհային պատվածքի շերտի

հաստության, պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների ուսումնասիրման և վիճակի գնահատման անհրաժեշտ խորությամբ,

- հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծի նկարմամբ պահանջներ

- Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, նորմերին և ԳՈՍՏ-ի պահանջներին:
- Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝
 - ✓ հողային պաստառի վերականգնում,
 - ✓ հենապատի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (եթե անհրաժեշտ է),
 - ✓ ճանապարհային պատվածքի վերականգնում / վերակառուցում (ըստ անհրաժեշտության),
 - ✓ մայթերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
 - ✓ ջրահեռացման համակարգի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
 - ✓ արհեստական կառուցվածքների վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
 - ✓ ճանապարհի կահավորում,
 - ✓ անվտանգության տարրերի իրականացում:

Նախագծի կազմի նկարմամբ պահանջներ՝

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն համաձայն ԳՕՇ 21.511-83-ի և ներառեն ոչ պակաս քան ստորև նշվածը՝
 - ✓ բացատրագիր (որն իր մեջ կներառի հիմնանորոգվող տեղամասի վիճակի, հետազննման արդյունքների՝ այդ թվում նաև գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտի հաստության, գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, հիմնանորոգված ծածկի անհարթության միջազգային ցուցիչի (ԱՄՑ) չափանիշի կիրառման պահանջները՝ հիմք ընդունելով անհարթության միջազգային ցուցիչի չափանիշի կիրառման մեթոդաբանության վերաբերյալ ՀՀ կառավարության 2016թ-ի սեպտեմբերի 29-ի նիստի թիվ 38 արձանագրային որոշումը, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտեզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենա-մեխանիզմների և ինժեներա-տեխնիկական մասնագիտական խմբի կազմերը),
 - ✓ ինժեներակառուցական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելյեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրատրակառուցությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),
 - ✓ հիմնանորոգվող տեղամասի ինժեներակառուցական լայնական և երկայնական կտրվածքներ, ճանապարհային պատվածքի, մայթի կոնստրուկցիաներ և այլն,

- ✓ գծագրեր (որոնք կներառեն՝ փախեռմեփորական հանույթի հափակագիծը, այդ թփում՝ հենանիշերը իրենց կորդինատներով, ճանապարհի երկայնական կփրվածքը, կահավորման և ջրահեռացման հափակագիծը, լայնական կփրվածքներ՝ յուրաքանչյուրը 20մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով փեղանքի իրադրությունը նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, ճանապարհային պափվածքի կոնսփրուկցիայի գծագրեր՝ բոլոր փիպերի համար կախված հարակից փարրերից),
- ✓ նախափեսավող արհեսփական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը),
- ✓ փիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախափեսավող աշխափանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թփում՝ շինարարության ընթացքում աշխափանքային փեղամասերը լուսաազդանշանային առկայծող լապերներով կահավորելու սխեման և այլն),
- ✓ ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխափանքների՝ ըսփ գրունտների կարգի, դրանց մշակման, փեղափոխման մեխանիզմների և աշխափանքի փեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըսփ ծածկի կոնսփրուկփիվ առանծին շերփերի և աշխափանքի փեսակի, կահավորման՝ ըսփ աշխափանքի փեսակի, արհեսփական կառուցվածքների՝ ըսփ աշխափանքի փեսակի, անվրանգության փարրերի՝ ըսփ աշխափանքի փեսակի ամփոփագրեր),
- ✓ համահավաք ամփոփագրեր
- ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխափանքի միավորի արծեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմափիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր փուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախափեսաված վերադարծի գումարի, կնքված և սփորագրված նախագծողի կողմից (այդ թփում հաշվի առնել չնախափեսաված աշխափանքների և ծախսերի 50%),
- ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և փեղային նախահաշիվներ)

Համաձայնեցումներ՝

- քաղաքաշինական փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,
- նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ,
- համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ,
- տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,
- կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:

Նորմափիվային պահանջներ

- Ինծեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ 1-2.01-99 նորմերի և ԳՕՍՏ 32836-2014-ի պահանջների համապատասխան:
- Ինծեներաերկրաքանական հետազննումն իրականացնել համաձայն ԳՕՍՏ 32868-2014-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի:
- Ինծեներագեոդեզիական հետազննումն իրականացնել համաձայն ԳՕՍՏ 32869-2014-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի:

<ul style="list-style-type: none"> • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի պահանջներին համապատասխան: • Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: • Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: • Նախագծային փաստաթղթերը կազմել համաձայն ԳՕՍՍ 21.511-83-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի: 	
Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտը՝ 30 (երեսուն) օրից, հաշված պայմանագրով նախատեսված աշխատանքների մեկնարկի օրվանից

ՉԱՓԱՔԱԺԻՆ 2

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Տավուշի մարզի Մ16 - Բերքաբեր ճանապարհի 4,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ	
Ծրագրի անվանումը	Ճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2019 թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Աշխատանքների անվանումը	ՀՀ Տավուշի մարզի Մ16 - Բերքաբեր ճանապարհի 4,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ
Ճանապարհի անվանումը	ՀՀ Տավուշի մարզի Մ16-Բերքաբեր ճանապարհ
Հարված	Ճշտել նախագծման ընթացքում
Երկարություն	4.0 կմ
Աշխատանքի տեսակը	Հիմնանորոգում
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Ճանապարհի կարգը	Թողնել անփոփոխ
Ճանապարհային պարվածք	Թեթևացված
Ծածկի տեսակը	Ա/բետոն

Ընդհանուր դրույթներ

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով, հինգակյան թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:

Հիմնական պարտականություններ և պահանջներ

Հիմնական պարտականություններ՝

- Ինժեներական հետազննման աշխատանքների իրականացում,
- նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում,
- շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնել հիմնանորոգվող տեղամասը՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով:

Հետազննման վերաբերյալ պահանջներ՝

- Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ 1-2.01-99 նորմերի և ԳՕՍՏ 32836-2014-ի պահանջների համապատասխան՝ նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով,
- հետազննման ընթացքում հիմնանորոգվող ճանապարհի երկայնքով, առնվազն յուրաքանչյուր 500 մետր տեղամասում կատարել հորատումներ՝ ճանապարհային պատվածքի շերտի հաստության, պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների ուսումնասիրման և վիճակի գնահատման անհրաժեշտ խորությամբ,
- հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծի նկատմամբ պահանջներ

- Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, նորմերին և ԳՈՍՏ-ի պահանջներին:
- Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝
 - ✓ հողային պաստառի վերականգնում,
 - ✓ հենապարի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (եթե անհրաժեշտ է),
 - ✓ ճանապարհային պատվածքի վերականգնում / վերակառուցում (ըստ անհրաժեշտության),
 - ✓ մայրերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (եթե անհրաժեշտ է),
 - ✓ ջրահեռացման համակարգի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
 - ✓ արհեստական կառուցվածքների վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (եթե անհրաժեշտ է),
 - ✓ ճանապարհի կահավորում,
 - ✓ անվտանգության տարրերի իրականացում:

Նախագծի կազմի նկատմամբ պահանջներ՝

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն համաձայն ԴՕՇՏ 21.511-83-ի և ներառեն ոչ պակաս քան ստորև նշվածը՝
 - ✓ բազափորագիր (որն իր մեջ կներառի հիմնանորոգվող տեղամասի վիճակի, հետազննման արդյունքների՝ այդ թվում նաև գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտի հաստության, գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, հիմնանորոգված ծածկի անհարթության միջազգային ցուցիչի (ԱՄՅ) չափանիշի կիրառման պահանջները՝ հիմք

ընդունելով անհարթության միջազգային ցուցիչի չափանիշի կիրառված անհարթության վերաբերյալ ՀՀ կառավարության 2016թ-ի սեպտեմբերի 29-ի նիստի թիվ 38 արձանագրային որոշումը, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտեզ՝ նշելով այն հարվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենա-մեխանիզմների և ինժեներա-տեխնիկական մասնագիտական խմբի կազմերը),

- ✓ ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելիեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),
- ✓ հիմնանորոգվող տեղամասի ինժեներաերկրաբանական լայնական և երկայնական կտրվածքներ, ճանապարհային պատվածքի, մայթի կոնստրուկցիաներ և այլն,
- ✓ գծագրեր (որոնք կներառեն՝ տախտոմետրական հանույթի հատկագիծը, այդ թվում՝ հենանիշերը իրենց կողմնադիրներով, ճանապարհի երկայնական կտրվածքը, կահավորման և ջրահեռացման հատկագիծը, լայնական կտրվածքներ՝ յուրաքանչյուր 20մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, ճանապարհային պատվածքի կոնստրուկցիայի գծագրեր՝ բոլոր տիպերի համար կախված հարակից տարրերից),
- ✓ նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը),
- ✓ տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեսվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թվում՝ շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասերը լուսաազդանշանային առկայծող լապտերներով կահավորելու սխեման և այլն),
- ✓ ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքների՝ ըստ գրունտների կարգի, դրանց մշակման, տեղափոխման մեխանիզմների և աշխատանքի տեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըստ ծածկի կոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կահավորման՝ ըստ աշխատանքի տեսակի, արհեստական կառուցվածքների՝ ըստ աշխատանքի տեսակի, անվտանգության տարրերի՝ ըստ աշխատանքի տեսակի ամփոփագրեր),
- ✓ համահավաք ամփոփագրեր
- ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),
- ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ)

Համաձայնեցումներ՝

- քաղաքաշինական փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,
- նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն»

Նորմատիվային պահանջներ

- ծառայության հետ,
- համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ,
- տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,
- կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:
- Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ 1-2.01-99 նորմերի և ԳՕՍՍ 32836-2014-ի պահանջների համապատասխան:
- Ինժեներատեխնիկական հետազննումն իրականացնել համաձայն ԳՕՍՍ 32868-2014-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի:
- Ինժեներագեոդեզիական հետազննումն իրականացնել ԳՕՍՍ 32869-2014-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:
- Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:
- Նախագծային փաստաթղթերը կազմել համաձայն ԳՕՍՍ 21.511-83-ի և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի:

Աշխատանքի կատարման ժամկետը

սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտը՝ 30 (երեսուն) օրից, հաշված պայմանագրով նախատեսված աշխատանքների մեկնարկի օրվանից

ՉԱՓԱՐԱԺԻՆ 3

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ156+700 - կմ160+200 հատվածի հիմնանորոգման նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ

Ծրագրի անվանումը	Ճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2019թ. ՀՀ պետական բյուջե
Պարվիրաբու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Աշխատանքների անվանումը	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ156+700 - կմ160+200 հատվածի հիմնանորոգման նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ
Ճանապարհի անվանումը	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման ավտոճանապարհ

Հարված	կմ156+700 – կմ160+200
Երկարություն	3.5կմ
Աշխատանքի տեսակը	Հիմնանորոգում
Նախագծման փուլը	Աշխատանքային նախագիծ
Ճանապարհի կարգը	Թողնել անփոփոխ
Ճանապարհային պարվածք	Կապիտալ
Ծածկի տեսակը	Ա/բետոն
